ՌՈՒՍՏԵՄԻՆ

«Սիրտդ է հիվանդ, պետք է բուժել
Խաղաղ ծոցում բնության...»
Գրտար, ընկեր, ու ճիշտ այդպես
Հիվանդ է նա անպայման։

Նրա ձայնը դու լսեցիր
Ու խոսեցիր սրտագետ,
Բայց ես, անփույթ, անուշադիր,
Միշտ կռռվել եմ նրրա հետ։

Քարշ եմ տրվել նրրան անկամ
Հազար ճամփա, հազար տուն,
Ծիծաղել եմ հազար անգամ,
Երբ լալիս էր նա թաքուն։

Զրսպել եմ ես նրրան իմ մեջ
Խալխի խոսքով ու չափով,
Ճընշել եմ ես նրրան անվերջ
Կյանքի ամեն տագնապով։

Ու, վերջապես, հոգնել է նա,
Եվ լրսում ես դու նրրան,
Լուռ հանգիստ է ուզում հիմա,
Նույնիսկ թեկուզ գերեզման։